

Հաստատված է՝

ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 2018թ.

սեպտեմբերի 30-ի № 2 նիստի որոշմամբ

ԵՊԼՀ գիտական խորհրդի նախագահ՝

Կ. Վ. Հարությունյան



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԲՐՅՈՒՍՈՎՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվա հասարագիտական համալսարանի /այսուհետ՝ ԵՊԼՀ/ Բրյուսովյան գիտական կենտրոնի /այսուհետ՝ Կենտրոն/ կանոնակարգը սահմանում է դրա գործունեության կազմակերպման հիմքերը, հիմնական խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, աշխատանքի ուղղությունները, ինչպես նաև ԵՊԼՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները:
2. Կենտրոնը ԵՊԼՀ-ի՝ գիտելիքներ և հոգևոր արժեքներ տարածող, ուսումնական գործընթացին օժանդակող, մտավոր և գիտամշակութային բնույթի աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում է:
3. Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրության, ԵՊԼՀ կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:
4. Կենտրոնի ֆոնդերը և անշարժ գույքը համարվում են ԵՊԼՀ սեփականությունը:
5. Կենտրոնից օգտվելու իրավունք ունեն համալսարանի աշխատակազմը, ուսումնառողները, հայաստանյան և օտարերկրյա գիտնականները, հետազոտողները:
6. Կենտրոնի գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Թումանյան փ. 42, ԵՊԼՀ:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Կենտրոնի խնդիրներն են՝

1. որպես ԵՊԼՀ առաջատար գիտական ուղղություն՝ բրյուսովագիտության զարգացմանը նպաստելը,
2. Վ.Բրյուսովի ստեղծագործական ժառանգության պահպանումը,
3. միջազգային գիտական հանրությանը «Բրյուսովյան գիտական կենտրոն»-ի նյութերի հասանելիության ապահովումը,
4. ԵՊԼՀ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցությունը,
5. միջազգային և հանրապետական նշանակության գիտաժողովներին և գիտական ծրագրերին մասնակցությունը,
6. ՀՀ և օտարերկրյա գիտական կենտրոնների, գրադարանների, թանգարանների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ համագործակցությունը:

8. Կենտրոնի գործառույթներն են՝

1. «Բրյուսովյան ընթերցումներ» գիտաժողովների կազմակերպում,
2. «Բրյուսովյան ընթերցումներ» գիտական նյութերի ժողովածուների և բրյուսովագիտությանը առնչվող գրքերի հրատարակում,
3. միջազգային գիտական հանրությանը Կենտրոնի նյութերի հասանելիության ապահովում,
4. կենտրոնի գրքային և այլ ֆոնդերի պահպանում,
5. բրյուսովագիտության ոլորտում ապագա մասնագետների պատրաստման աջակցություն /մագիստրոսներ, գիտական կադրեր/,
6. Վ.Բրյուսովի և համալսարանի պատմության թանգարանների նյութերի պահպանում և համալրում,
7. էլեկտրոնային համակարգի միջոցով ֆոնդերի բովանդակության մատենագիտական արտացոլում:

III. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Կենտրոնն անմիջականորեն ենթարկվում է ԵՊԼՀ՝ ռեկտորին:

10. Կենտրոնի աշխատանքները համակարգում է Կենտրոնի ղեկավարը:

11. Կենտրոնի ղեկավարին նշանակում և ազատում է ԵՊԼՀ ռեկտորը:

12. Կենտրոնի ղեկավարը՝

1. կազմակերպում է Կենտրոնի գործունեությունը և ապահովում է հիմնական աշխատանքների արդյունավետ կատարումը,
2. իր լիազորությունների սահմաններում հանձնարարականներ է տալիս Կենտրոնի աշխատակիցներին,
3. կազմակերպում և վերահսկում է Կենտրոնի գործավարությունը,
4. պատասխանատվություն է կրում Կենտրոնի աշխատանքների որակի, խնդիրների լուծման և գործառույթների պատշաճ կատարման համար,
5. հաշվետու է համալսարանի ռեկտորի առջև,
6. պատասխանատու է Կենտրոնին հատկացված գույքի և սարքավորումների համար:

13. Կենտրոնը իր մեջ ներառում է՝

1. Վ. Բոյուսովի թանգարանը,
2. ԵՊԼՀ պատմության թանգարանը: